ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԵԼՔԸ*

Ե. Պ. ԱՂԱՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս

Հաշվետու տարին նշանավորվեց երկու մեծ հոբելյաններով։ Սովետական ողջ ժողովուրդը և աշխարհի առաջադեմ մարդկությունը նշեցին մեր կուսակցության և պետության հիմնադիր ու առաջնորդ Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակը, ինչպես նաև՝ Հայաստանում սովետական իշխանության հաստատման և կոմունիստական կուսակցության հիմնադրման 50-ամյա պանծալի տարեդարձը։

Հասարակական գիտությունների բնագավառի գիտնականները ըստ արժանվույն դիմավորեցին այդ նշանավոր իրադարձությունները։ Հոբելյանական տարում լույս տեսան՝ «Լենինը և ազգային հարցի լուծումը ՍՍՀՄ-ում», «Բանվորական շարժումը և ազգային հարցը Անդրկովկասում», «Անդրկովկասի ժողովուրդների դարավոր բարեկամությունը», «Սովետական Հայաստանը 50 տարում» (հասարակական գիտությունների բաժանմունք), «Կուսակցականության լենինյան սկզբունքը և հայ գրականությունը», «Վ. Ի. Լենինը և տեխնիկական առաջընթացը», «Լենինյան ուսմունքը սոցիալիստական վերարտադրության մասին», «Լենինը և Մերձավոր ու Միջին Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները» մենագրություններն ու կոլեկտիվ աշխատությունները։ Հատկապես ընդգծելի է «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի 7-րդ և 8-րդ հատորների լույս ընծայումը, որոնք ընդգրկում են Հայաստանում սովետական կարգերի հաղթանակի ու կոմունիստական շինարարության ժամանակաշրջանները։ Հոբելյանական օրերին հասարակական գիտությունների բաժանմունքն ու նրա ենթակայության ինստիտուտները, կատարեցին հույժ բեղմնավոր գիտա-մասսայական աշխատանք։ Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակի առթիվ բաժանմունքի կազմակերպած հոբելյանական ընդհանուր ժողովում և ինստիտուտների գիտական հատուկ նստաշրջաններում լսվեցին բազմաթիվ զեկուցումներ՝ նվիրված Վ. Ի. Լենինի կյանքի ու գործունեության, նրա թողած գիտական-գաղափարական հարուստ ժառանգության ըստ ամենայնի գնահատմանը։

Հայաստանում սովետական իշխանության հաստատման և կոմունիստական կուսակցության կազմավորման 50-ամյակին նվիրված բաժանմունքի ընդհանուր ժողովի պլենար նիստում լսվեցին հետևյալ զեկուցումները՝ «Սովետական Հայաստանը 50-տարում» և «Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմակերպական ձևավորումը»։ Տեղի ունեցան նաև 5 սեկցիոն նիստեր, ուր լսվեցին 24 զեկուցում՝ առանձին գիտությունների ասպարեզում

---

* *Զեկուցում՝ կարդացված 1970 թ. մարտի 17-ին, ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի հաշվետու ժողովում։*

16 տարում Հանրապետության գիտնականների ձեռք բերած հաջողություններ. գիտական զանազան կարևոր պրոբլեմների մասին։

Մեծ Հոբելյաններին հատուկ համարներ նվիրեցին հասարակական գիտությունների բաժանմունքի «Պատմա-բանասիրական հանդես» և «Լրաբեր» ամսագրերը։

Հասարակագիտական ինստիտուտները Հանրապետության շրջաններում և քաղաքներում կազմակերպեցին արտագնաց գիտական նստաշրջաններ, հանդիպումներ ունեցան հիմնարկ-ձեռնարկությունների կոլեկտիվների հետ ուր զեկուցումներով հանդես եկան ինստիտուտների շատ անվանի գիտնականներ։

ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական մասնաճյուղի և ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ինստիտուտների համատեղ ջանքերով անց է կացվել նաև Ֆ. Էնգելսի ծննդյան 150-ամյակին նվիրված գիտական նստաշրջան։

Հայ ժողովրդի պատմության, տնտեսության, մշակույթի, գիտության և այլ բնագավառներին նվիրված մեր գիտնականների աշխատությունները մեծ արձագանք են գտնում ժողովրդի լայն զանգվածների շրջանում և դրանով իսկ նպաստում այդ ուղղությամբ տարվող աշխատանքների աննախադեպ զարգացմանը։

Բաժանմունքի ինստիտուտներում և արևելագիտության սեկտորում 1970 թ. մշակվել է շուրջ 365 թեմա ընդգրկող 42 գիտական պրոբլեմ։

Այժմ համառոտակի անդրադառնանք ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի գիտական հաստատություններում կատարված աշխատանքների արդյունքներին։

Տնտեսագիտության ինստիտուտի աշխատանքների հիմնական պրոբլեմը հաշվետու տարում եղել է Հանրապետության հասարակական արտադրության տնտեսական արդյունավետության բարձրացման պրոբլեմը։ Աշխատանքը տարվել է հետևյալ հիմնական ուղղությամբ՝ արտադրության կառուցվածքի կատարելագործում և ժողովրդական տնտեսության համամասնությունների, կապիտալ ներդրումների և հիմնական ֆոնդերի տնտեսական արդյունավետության, աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, տեխնիկական առաջընթացի նյութական խթանման և տնտեսական ռեֆորմի պայմաններում արտադրության աճի և տնտեսագիտական հետազոտությունների մեջ մաթեմատիկական մեթոդների, հաշվիչ մեքենաների կիրառում։

Ավարտված են՝ «Միութենական Հանրապետության ամբողջ հասարակական արդյունքի ընդլայնված վերարտադրությունը (ՀՍՍՀ-ի օրինակով)», «Համախառն արդյունքի ընդլայնված արտադրությունը գյուղատնտեսության մեջ», «Գիտությունը որպես հասարակության արտադրողական ուժ և նրա դերը հասարակական վերարտադրության մեջ», «Կապիտալ ներդրումները և հիմնական ֆոնդերը Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության մեջ մինչ 1985 թ. հեռանկարով», «Կապիտալ ներդրումների տնտեսական արդյունավետությունը Հայկական ՍՍՀ քիմիական արդյունաբերության մեջ», «Արտադրական հզորությունների օգտագործումը Հանրապետության գունավոր մետալուրգիայի ձեռնարկություններում» և այլ թեմաներ։ Հանրապետության վիճակագրական վարչության հետ մեկտեղ ինստիտուտը կազմել է Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության հիմնական ֆոնդերի առաջին հաշվետու

միջնյուղային բալանսը, որը հավանություն է գտել ՍՍՀՄ վիճակագրական վարչությունում։

Մաթեմատիկական մեթոդների և էլեկտրոնային հաշվիչ մեքենաների կիրառմամբ մշակվել են հանրապետության ժողովրդական տնտեսության 23 հյուղերի պլանավորման մեթոդիկա և մանրակաղապար, արդյունաբերական առանձին ձեռնարկության արտադրական գործունեության լավագույն պլանավորում՝ պլանավորման և տնտեսական խթանման նոր պայմաններում և այլն։

Ժողովրդական տնտեսության և տնտեսական մտքի պատմությունը Հայաստանում պրոբլեմի բնագավառում ավարտվել է «Հայ սոցիալ-տնտեսական միտքը վաղ միջնադարում» ուսումնասիրությունը, ուր բացահայտված են սոցիալական հակասությունների և գյուղացիական շարժումների գաղափարախոսության բնույթն ու բովանդակությունը։

Հաշվետու տարում լույս են տեսել «Հայ սոցիալ-տնտեսական միտքը IX—XIV դարերում», «Գծային ծրագրավորման մի քանի մեթոդներ և խնդիրներ», «Գիտա-տեխնիկական առաջընթացն ու նրա խթանումը», «Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության միջնյուղային կապերը» աշխատությունները և այլն։

Տնտեսագիտության ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքների պլաններով 1970 թ. ավարտվող թեմաների թիվը 26 է, որից նախատեսված ժամանակում ավարտվել է 20-ը։

Ինստիտուտում սահմանված է բաժինների և դիրեկցիայի մշտական հրավիրյալ թեմաների կատարման վրա, կիրառվում է անհատական պլանների սիստեմը, թեմաների և անհատական պլանի կատարումը ստուգվում է 3 ամիսը մեկ։

Պատմության ինստիտուտի կարևորագույն խնդիրներից է «Հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակի հրատարակումը, որը բավական ձգձգվել է։ Ավարտվել են աշխատանքները 4-րդ և 5-րդ հատորների վրա։ Շուտով լույս կտեսնի առաջին հատորը։ 3-րդ հատորը ավարտվելու վրա է։

Պետք է հատուկ ուշադրություն դարձնել 2-րդ և 6-րդ, ինչպես նաև հայ պատմագրությանը նվիրված 9-րդ հատորների հետ տարվող աշխատանքների վրա։

«Սոցիալիստական և կոմունիստական շինարարության պատմության» պրոբլեմի բնագավառում ավարտվել են՝ «Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը սոցիալիզմից կոմունիզմին անցման շրջանում», «Հայ ժողովրդի մասնակցությունը Բելոռուսիայի ազատագրման համար մղված մարտերում», «Քաղաքների զարգացումը Սովետական Հայաստանում» թեմաները։

Ավարտվել են «Անդրկովկասի բոլշևիկների պայքարը հայ բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունների դեմ», «XVII դ. հայկական ձեռագիր հիշատակարանները» աշխատության 2-րդ մասը, «Հին Հայաստանի պատմությունը VI դ. ասորական տարեգրություններով» աշխատությունը։ Հրատարակվել են «Հայաստանի բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի պատմությունից», «Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում» (1880—1905), «Հայաստանի հին և միջին դարերի պատմության հարցերի լուսաբանումը արդի թուրք պատմագրության մեջ». «Կոստանդին Ծիրանածին», «Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագ-

ներ», «Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից III—V դդ.» աշխատությունները։

Զգալի աշխատանք է կատարվել հայ գաղթավայրերի պատմության ուսումնասիրման բնագավառում։ Ավարտվել է «Ուկրաինական և հայ ժողովուրդների պատմական կապերն ու բարեկամությունը» ժողովածուն։ Հայ պարբերական մամուլի պատմությունից լույս է տեսել «Հայաստանի պարբերական մամուլը սոցիալիզմի կառուցման պայքարում» մենագրությունը, պատմագրությունից՝ «Ֆեոդալիզմի դարաշրջանի պատմության ուսումնասիրությունը Հայաստանում սովետահայ պատմագրության մեջ» և այլն։

Ավարտման ենթակա 18 թեմաներից ավարտվել է վեցը։

Ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքների պլանավորման մեջ նկատվում է հետևյալ ոչ հիշտ մոտեցումը՝ ծավալուն թեմաներին երկար ժամանակ չտալու համար, դրանք հաճախ, արհեստականորեն, տրոհվում են երկու մասի։ Որոշ ժամանակ անց պլանավորվում է թեմայի երկրորդ մասը, այն հաշվով, որ թեմայի ամբողջական շարադրանքը ինստիտուտին ներկայացվի միաժամանակ։ Փորձը ցույց է տալիս, որ պլանավորման այդ կարգը պետք է վերանայվի։

Հաշվետու տարում Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի աշխատանքներն ընթացել են՝ «Արդի ժամանակաշրջանի գրականության զարգացման օրինաչափությունները», Մարքս-լենինյան գրականություն, Պոետիկա, Հայ նոր գրականություն, Հայ հին և միջնադարյան գրականություն, Հայ դասական գրողների երկերի հրատարակություն և Գրական կապեր ուղղությամբ։

Ավարտվել են «Արդի հայ գրականության զարգացման տենդենցները», «Սոցիալիստական ռեալիզմի ձևավորումը հայ գրականության մեջ», «Վերջին տասնամյակի սովետահայ պոեմը» և այլ աշխատություններ։ Լույս են տեսել «Գրականության կուսակցության լենինյան ուսմունքը և հայ գրականագիտությունը», «Տասնամյակի քնարերգությունը» մենագրությունները։

Հայ նոր գրականության պատմության բաժնի հիմնական խնդիրներից են հայ նոր գրականության պատմության հինգհատորյակի պատրաստումն ու լույս ընծայումը։ 1962—1964 թթ. հրատարակվեցին I, II, III հատորները, ընթացքի մեջ է IV հատորի տպագրությունը։ Սկսված է XIX դարի հայ քննադատական մտքի պատմությունը պրոբլեմի հետազոտությունը։ Ավարտվել են «Շարականները V—VI դարերում», «Սայաթ-Նովան և միջնադարյան հայ տաղերգուները», «Միջնադարյան սիրո քնարերգության պոետիկան» ուսումնասիրությունները։ Համապատասխան բաժինների ջանքերով կազմվել է «Ռաֆֆին ժամանակակիցների հուշերում» ժողովածուն, Հակոբ Պարոնյանի երկերի ակադեմիական հրատարակության 10-րդ հատորը, Դերենիկ Դեմիրճյանի երկերի առաջին 6 հատորները, պատրաստվում են Պարոնյանի երկերի 9-րդ հատորը, Չարենցի դրական անտիպ ժառանգությունը, Ա. Իսահակյանի «Սասմա Մհեր» պոեմը և այլն։

Լուրջ ուշադրություն է դարձվում ժամանակակից գրական ժանրերի, ինչպես նաև գրական կապերի հետազոտման վրա։

Գրականության ինստիտուտի 1970 թ. պլանում եղել է 22 աշխատություն, որից ժամանակին չի ավարտվել միայն մեկը։ 1970 թ. լույս է տեսել 7 աշխատություն, 13-ը տպագրության ընթացքի մեջ են։

2. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը ևս ընթացիկ տարում առանձնակի ուշադրություն է դարձրել կոլեկտիվ թեմաներին։

Հայոց լեզվի կառուցվածքի ուսումնասիրության պրոբլեմի ուղղությամբ ավարտվել և հրատարակվել է «Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում» աշխատությունը։

Ավարտվել է «Ժամանակակից գրական հայերենի ուղղախոսությունը» կարևոր թեման։ Այս աշխատանքը առանձնապես արժեքավոր է գրական արտասանության նորմավորման տեսակետից։ Աշխատանք է տարվում հայոց լեզվի զարգացման օրինաչափությունների, հայ բարբառների հետազոտության, հայերենի պատմահամեմատական ուսումնասիրության, բառարանագիտության ու բառագիտության, խոսքի մշակույթի ու տերմինաբանության հարցերի ուղղությամբ և այլն։

Կատարվել են Աշտարակի, Փարպիի ու Էջմիածնի խոսվածքների հնչյունական համակարգի փորձառական ուսումնասիրությունը և Քանաքեռի, Ջըրվեժի ու Մհուբի խոսվածքների հնչյունական համակարգի լսողական վերլուծությունը։

Կարևոր նշանակություն ունեն՝ Հայերենի պատմական քերականությունը, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը կոլեկտիվ թեմաները, Հայոց լեզվի տերմինաշինության աղբյուրներն ու ուղիները, Հայոց լեզվի բառակազմության ճկունությունը աշխատությունները և այլն։

Լեզվի ինստիտուտը 1970 թ. պլանում ունեցել է 13 թեմա, որից 5-ը աշխատակիցների հեռանալու պատճառով չեն ավարտված. մեկը հանձնված է փորձառական ստուգման՝ Մոսկվայի համապատասխան հաստատությունում։ Մնացած թեմաները ավարտված են։

Ամենակարևորն այն է, որ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի» երկրորդ հատորը տպագրության պրոցեսում է։ Երրորդ հատորը պատրաստ է և հանձնված է հրատարակության։ 4-րդ և 5-րդ հատորները պատրաստ են և ենթակա են խմբագրման։ Հայերենի բացատրական բառարանի հրատարակումը խոշոր ներդրում է մեր մշակույթի զարգացման մեջ և մեծ խթան կհանդիսանա մեր լեզվական կուլտուրայի մշակույթի բարձրացման համար։

Հաշվետու տարում կազմակերպվեց փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտը, որի գիտական գործունեությունը ընթանում է հետևյալ ուղղություններով՝ գիտական իմացության տրամաբանության և մեթոդոլոգիայի, որի բնագավառում հետազոտվել են գիտելիքի նկատմամբ ձևական ուսումնասիրության կիրառման հնարավորություններն ու սահմանները։ Բացահայտվել է իմացաբանական, տրամաբանական, հոգեբանական մոմենտների փոխհարաբերությունը գիտական տեսության մեջ, գիտական իմացության մեջ կոնվենցիայի տեղը և դերը, քննարկվել է նշանի և ստրուկտուրայի դերը տրամաբանական տեսության մեջ և այլն։

Հասարակագիտության մեթոդոլոգիական պրոբլեմների հետազոտման բնագավառում ճշգրտվել է արդյունաբերական հեղափոխության մանրակաղապարի հարցը՝ կապված արտադրաեղանակների տիպերի հետ։ Վերլուծվել են «տեխնիկական հեղափոխություն», «արդյունաբերական հեղափոխություն», «սոցիալական հեղափոխություն» հասկացությունները։

Կոնկրետ սոցիոլոգիական հետազոտությունների բնագավառում լուսա-

բանվել են վիճակագրական կորելացիոն սանդղավորման մեթոդների կիրառման պայմանները, ճշգրտվել «հատուկ սոցիոլոգիական տեսություն» հասկացությունը և այլն։

Պետության և իրավունքի բաժինը ավարտել է «Սովետական Հայաստանի պետության և իրավունքի պատմություն» կոլեկտիվ աշխատության I հատորը և շարունակում է աշխատանքը II հատորի վրա։

Փիլիսոփայության պատմության բաժնում արխիվային նյութերի հիման վրա ուսումնասիրվել են Ն. Ռուսինյանի, Վ. Ռաբունու, Ա. Բագրատունու, Մ. Բաղիադյանի փիլիսոփայական և քաղաքական հայացքները։ Գեղագիտության բաժնում հետազոտվել են արվեստի սպեցիֆիկայի, ֆունկցիաների ու խնդիրների հարցը և այլն։ Ինչպես տեսնում ենք, ինստիտուտի թեմատիկան միանգամայն այժմեական է։

Ինստիտուտի բեղմնավոր աշխատանքի ապացույցն են հետևյալ ուսումնասիրությունները՝ «ՀՍՍՀ սովետների և պետական կառավարման օրգանների գործունեությունը» (հեղինակային կոլեկտիվ), «Ընդհանուրը և առանձնահատուկը հեղափոխական պրոցեսում», «Նշանը և կերպարը», «Տեխնիկայի զարգացման որակական փուլերը և ժամանակակից գիտատեխնիկական հեղափոխությունը», «Էսթետիկայի հարցերը» ժողովածուն և այլն։

Հաշվետու տարում ինստիտուտի պլանում եղել է 11 աշխատություն, որոնցից մեկը չի կատարվել գիտական աշխատողի հեռանալու պատճառով։ Մնացած բոլոր աշխատությունները ավարտված են կամ պատրաստ են տպագրության կամ խմբագրական պրոցեսում են։

1970 թ. հրատարակչական պլանով ինստիտուտը տպագրության է հանձնել 9 աշխատություն։ Մոսկվայում ռուսերեն հրատարակվում են ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Վազգեն Զալոյանի «Հայ փիլիսոփայության պատմությունը սկզբից մինչև 1919 թ.» ուսումնասիրությունը (նույնը միաժամանակ հրատարակվում է հայերեն), փիլ. գիտ. դոկտոր Ս. Թովմասյանի «Աշխատանքի և տեխնիկայի փիլիսոփայության պրոբլեմները» ծավալուն աշխատությունը (նույնը հրատարակվում է նաև չեխերեն)։ Հրատարակման պրոցեսում է փիլ. գիտ. դոկտոր Յա. Խաչիկյանի «Գեղարվեստական ճանաչողության պրոբլեմները և աբստրակցիոնիզմը» աշխատությունը։

Գնալով ընդլայնվում են Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ծավալած դաշտային գիտարշավների և գիտահետազոտական աշխատանքների շրջանակները։ Հաշվետու տարում նշանակալից գործ է կատարվել հետևյալ պրոբլեմների ուղղությամբ։ Հայաստանի հնագիտական ուսումնասիրություն, Հայաստանի ազգագրական ուսումնասիրություն, բանահյուսություն, երաժշտական և պարային ֆոլկլոր, Հին Արևելքի վիմագրություն։

Ինստիտուտում տարվող հնագիտական ուսումնասիրություններն ընդգրկում են պալեոլիթից մինչև ուշ միջնադար։ Մեծ աշխատանք է տարվում ժայռապատկերների ուսումնասիրման, ուրարտական Թեյշեբաինի, Էրեբունի և Արգիշտիխինիլի քաղաք-ամրոցների, անտիկ ժամանակաշրջանի մշակույթի ուսումնասիրման գործում։ Վերջինիս համար կարևոր նշանակություն ունեն Գառնի ամրոցի, Հին Արմավիրի և նորերս սկսված Հին Արտաշատի պեղումները։

Հնագիտական հուշարձաններին զուգահեռ չափազանց կարևոր նշանակու-

թյուն ունեն ուրարտական, խեթական, հայկական արձանագրությունների վերծանումն ու ուսումնասիրությամբ հրատարակումը։

Հայ ազգագրության ուսումնասիրության ասպարեզում ընթացիկ տարում կարևորագույն նշանակություն է ունեցել Կովկասի պատմա-ազգագրական ատլասի կազմումը, որին զուգահեռ հետազոտվել ու քննարկվել են հայ ժողովրդի ավանդական ազգագրության և հայ ազգագրական գիտության պատմության հարցերը։ Բանահյուսության բաժնի գործունեությունը ընթացել է հայ ժողովրդական բանարվեստի, պարարվեստի և երգարվեստի հավաքման, հրատարակման և հետազոտման գծով։ Բաժինը շարունակել է «Հայ ժողովրդական հեքիաթները» ակադեմիական հրատարակությունը շնորհակալ գործ է, որի 6-րդ և 7-րդ հատորները գտնվում են տպագրական պրոցեսում։ Լուրջ աշխատանք է կատարվել նաև ինստիտուտի բանահյուսական հարուստ արխիվի կարգավորման ուղղությամբ։

Հաշվետու տարում լույս են տեսել «Հայաստանի հնագիտական հուշարձանները» (IV և V պրակ), «Հայ ժողովրդական «Օրորոցային և մանկական երգեր», «Բիայնիլի-Ուրարտու», «Հայ ազգագրություն և բանահյուսություն» (մատենաշարի 1-ին հատորը), աշխատությունները։

Հնագիտության և ազգագրության ինստիտուտում 1970 թ. ավարտվող 28 թեմաներից 24-ը ավարտված է, որոնցից 6-ը պատրաստ է հրատարակության։

Արվեստի ինստիտուտում շարունակվում է աշխատանքը «Հայ ճարտարապետության պատմության» 3-րդ հատորի վրա։ Ինստիտուտի աշխատակիցները մասնակցում են հանրապետությունում հուշարձանների վերանորոգման և վերականգնման աշխատանքներին։

Ալեքսանդր Սպենդիարյանի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ ինստիտուտը պատրաստել է հայ երաժշտական արվեստի մեծ երախտավորի կյանքին ու գործունեությանը նվիրված մենագրություն։

Հաշվետու տարում երաժշտության բաժնի աշխատակիցները գրել են Մոսկվայում հրատարակվող «ՍՍՀՄ ժողովուրդների երաժշտությունը» բազմահատոր աշխատության «Սովետական Հայաստանի երաժշտությունը 1956—1967 թթ.» բաժինը։

Աշխատանք է տարվել նաև Կոմիտասի երկերի ակադեմիական հրատարակության 4-րդ հատորի վրա, ավարտվել է «Հայ վիպերգեր և երաժշտավեպեր» ժողովածուն, շարունակվում է աշխատանքը «Հայրենի երգ ու բան» ժողովածուի 2-րդ հատորի վրա։ Ավարտվել են «Հայ միջնադարյան արվեստի վարպետները» մատենաշարից «Նկարիչ Մարգարեն», «4—7-րդ դդ. հայկական որմնանկարները», «Տեղական դեկորատիվ քարերի օգտագործումը Հայաստանի ճարտարապետության մեջ», «Հայկական կարպետը» և այլ թեմաներ։

Զգալի աշխատանք է կատարվել հայ թատրոնի, մշակութային կապերի պատմության, շեքսպիրագիտության բնագավառում։ Ավարտվել են «Հայ թատրոնի 1901—1920 թթ. տարեգրությունը», Շեքսպիրի պատմական քրոնիկների («Հենրի V») վրա տարվող աշխատանքները, «Հայ-ռուսական կապերը կերպարվեստում», «Հայ-վրացական մշակութային կապերը» ուսումնասիրությունները և այլն։

Ընթացիկ տարում արվեստի ինստիտուտը հրատարակման է պատրաստել 10 աշխատություն, այդ թվում՝ հրատարակվել են՝ Վ. Վ. Ստասովը, Ա. Ն. Վե-

սեյովսկին, Ա. Վ. Լունաչարսկին և Ա. Մ. Գորկին «Հայաստանի և հայ կուլտուրայի մասին» ժողովածուն, Հովհաննես Խալիփախչյանի և Ալպագո Նովելլոի «Սանահինը», «Շեքսպիրականի» 3-րդ գիրքը, «Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում»։

Արևելագիտության սեկտորը հաշվետու տարում ավարտել է Իրանը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, Իրանը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին թեմաները, Իրանի ազգայնական բուրժուազիայի կառավարության ներքին քաղաքականությունը (1951—1953), Հունա-թուրքական հարաբերությունները 1908—1914 թթ., Գերմանա-թուրքական հարաբերությունները երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, Հայկական գաղութների դերը Հնդկաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում XVII—XVIII դդ. և այլ թեմաներ։ Արդեն հրատարակվել են «Ագրարային հարաբերությունները Իրանում XIX դ. երկրորդ կեսին» ուսումնասիրությունը և «Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներն ու ժողովուրդները» ժողովածուի 5-րդ հատորը։

Քրդագիտության բաժնում ավարտվել է Քրդական հարցը Իրաքի հանրապետությունում թեման և հրատարակվել «Ակնարկներ Սովետական Հայաստանի քրդական գրականության» մենագրությունը։

1970 թ. ավարտվել են նաև արաբական երկրների պատմության վերաբերյալ իմպերիալիստական հակասությունների սրումը Մերձավոր և Միջին Արևելքում և Սիրիայի քաղաքական դրությունը (1949—1954 թթ.), Սիրիական հայ գաղութի պատմությունը XIX դարում թեմաները։

Արևելագիտության սեկտորում 1970 թ. ավարտվող 15 թեմաներից ավարտվել է 9-ը։

Հասարակական գիտությունների բաժանմունքի և ինստիտուտների ուշադրության կենտրոնում է եղել նաև պրոբլեմային խորհուրդների աշխատանքը։

Առաջինը՝ «Հիմնական ֆոնդերի, կապիտալ ներդրումների և նոր տեխնիկայի տնտեսական էֆեկտիվությունը» հայկական սեկցիայի պրոբլեմային խորհուրդն է, որն ընթացիկ տարում կազմել է 1970, 1971 և 1971—1975 թթ. հնգամյա պլանի կոորդինացիոն պլանները։ 1970 թ. պլանով նախատեսվել է մի շարք կարևոր թեմաների կատարում՝ նվիրված էֆեկտիվության պրոբլեմին։ Այդ գործում ընդգրկված են 5 գիտա-հետազոտական կազմակերպություններ։ Կապեր են ստեղծվել հանրապետության այլ գիտա-հետազոտական կազմակերպությունների և բուհերի հետ, անցկացվում են կոնսուլտացիաներ և այլն։ Ընթացիկ տարում քննարկվել են «Հանքավայրերի արդյունաբերական գնահատման սկզբունքները» և այլ աշխատություններ։

Երկրորդը՝ «Օպտիմալ պլանավորում և ժողովրդական տնտեսության կառավարում» պրոբլեմի հայկական սեկցիայի պրոբլեմային խորհուրդն է, որը նույնպես զգալի աշխատանք է կատարել։ Քննարկվել են ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ա. Առաքելյանի և պրոֆեսոր Վ. Ս. Դագայանի զեկուցումները «Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության զարգացման հանրագումարային ցուցանիշների տարբերակային հաշվարկը մինչև 1985 թ. հեռանկարով» հարցի մասին, Ա. Հարությունյանի և Ի. Գրիգորյանի «Լավագույն պլանավորման տնտեսա-մաթեմատիկական մանրակազմաթի մասին», Ս. Սուքիասյանի մաթեմատիկական ծրագրավորման մասին թեմաները և այլն։

Երրորդը «Կապիտալիզմի դենեզիսը» պրոբլեմի հայկական սեկցիայի

խորհուրդն է։ Այստեղ ուշադրություն է դարձվել հայկական իրականության մեջ բուրժուական հարաբերությունների ծագման և կապիտալիզմի գենեզիսի հարցերին Անդրկովկասում։

Առաջիկայում ավելի պետք է ակտիվացնել այս խորհուրդների աշխատանքը, բարելավել պահանջվող ինֆորմացիան ժամանակին և լիովին ստանալու հարցը։

Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի բազայի վրա կազմվել է «Արտասահմանյան գաղափարական հոսանքների դեմ պայքարող» խորհրդի հայկական սեկցիա։

Հաշվետու տարում զգալի աշխատանք են կատարել հասարակական գիտությունների բաժանմունքի գիտնականները։ Նրանք հրատարակել են աշխատություններ, մասնակցել գիտակազմակերպչական զանազան աշխատանքների։

Ակադեմիկոս Ա. Ռ. Հովհաննիսյանը պատշաճ օգնություն ու ղեկավարություն է ցույց տվել բաժանմունքին։ Նա գլխավորում է հրատարակչական խորհրդի աշխատանքը։ Նրա ղեկավարությամբ և ակտիվ մասնակցությամբ է անցկացվել Փարիզում հայ մշակույթի և արվեստի ցուցահանդեսը, որի գլխավոր կոմիսարն էր նա։ Նրա ղեկավարությամբ Երևանում անցկացվեց ֆրանսսովետական պատմաբանների կոնֆերանս, որը կարևոր նշանակություն ունեցավ։

Ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանը 1970 թ. ընթացքում շարունակել է խմբագրել ԳԱ «Պատմա-բանասիրական հանդեսը», այնուհետև «Հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակի V հատորը։ Նա այժմ աշխատում է «Հայ ժողովրդի գենոցիդը» գրքի II հատորի և «Հայաստանը, Թուրքիան և մեծ պետությունները» մենագրության վրա։ Ակադ. Մ. Գ. Ներսիսյանը միաժամանակ խմբագրել է պետական համալսարանի 50-ամյակի կապակցությամբ լույս տեսած «Մեր անվանի դասախոսները» և «Երևանի համալսարան» (ռուսերեն և անգլերեն) գրքերը։

Ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանը զեկուցումով հանդես է եկել Լենինգրադում կայացած տնտեսագիտության պատմության V կոնգրեսում, խմբագրել է բազմահատորյակի I հատորը, հանդես եկել հոդվածներով։

Լույս տեսավ ակադեմիկոս Ա. Ս. Ղարիբյանի ռուս-հայերեն բառարանը, վերահրատարակվեց նաև նրա հայոց լեզվի ինքնուսույցը։ Ա. Ղարիբյանը միաժամանակ կազմել է 100.000 բառաքարտ հայ-ռուսերեն բառարանի համար, հրատարակման է պատրաստել դպրոցական դասագրքեր և այլն։

Հաշվետու տարում լույս տեսան ակադեմիկոս Ա. Ա. Առաքելյանի «Քաղաքատնտեսության դասընթացի» 2-րդ հատորը (հեղինակակցությամբ), և «ՍՍՀՄ հիմնական ֆոնդերի վերարտադրությունը» (հեղինակակցությամբ) աշխատությունները, ակադեմիկոս Ա. Գ. Հովհաննիսյանի Դավիթ Բեկի պատմությանը և Հայաստանում սովետական կարգերի հաստատման նախապատմությանը նվիրված ընդարձակ հոդվածները։

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Լ. Ս. Խաչիկյանը հրատարակել է «Սովետական կարգեր, արգասաբեր տարիներ», «Մատենադարանի ձեռագրերը և համաշխարհային մշակույթը» և այլ հոդվածներ։

Հաշվետու տարում լույս են տեսել ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. Ղարիբջանյանի «Լենինը և Անդրկովկասը», «Ազատության արշալույսին» աշխատությունները և այլն։

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Սևակը վերատպարակել է «Հայոց լեզվի շարադրությունը» աշխատությունը և «Բայի խոնարհման համակարգի շուրջը», «Հ. Թումանյանի լեզվի ժողովրդայնությունը» հոդվածները. խմբագրել է Լ. Պետրոսյանի «Հովհ. Թումանյանի գեղարվեստական երկերի լեզվի բառարանը» աշխատությունը, կատարել է գիտահետազոտական մեծ աշխատանք լեզվաբանության, տերմինաբանության մի շարք հարցերի շուրջ, կարդացել է դասախոսություններ և զեկուցումներ։

Ակադեմիայի թղթակից անդամ Բ. Ն. Առաքելյանը գործուղվել է Հունգարիա՝ հնագիտական, ազգագրական և բանագիտական աշխատանքների դրվածքին ծանոթանալու նպատակով, իսկ հետո Փարիզ՝ Հայկական արվեստի ցուցահանդեսի բացմանը մասնակցելու։ Նա ելույթ է ունեցել նաև պատմական գիտությունների XIII միջազգային կոնգրեսում։

Այս տարի Մոսկվայում ռուսերեն և Հայաստանում հայերեն լույս է տեսել ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Վ. Ջալոյանի «Գրիգոր Նարեկացու ստեղծագործության աշխարհաճանաչողական հիմունքները» աշխատությունը. Հռոմում կայացած փիլիսոփայական գիտությունների միջազգային կոնգրեսում կարդացվել է նրա «Ժառանգականությունը նեոպլատոնիզմի փիլիսոփայության զարգացման մեջ Արևելք-Արևմուտք» զեկուցումը, որն այնտեղ էլ հրատարակվել է։

ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ա. Ղանալանյանը «Սովետահայ բանագիտությունը 50 տարում» թեմայով զեկուցում է կարդացել բաժանմունքի ընդհանուր ժողովում։ Ամսագրերում լույս են տեսել նրա մի շարք հոդվածներ։ Հրատարակվել են ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Գ. Բ. Ջահուկյանի «Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները» մենագրությունը, «О соотношении лингвистических единиц и их различительных признаков» (Մոսկվայում), «Հայերենը և իլիրերենը» (Վենետիկում) հոդվածները, «Դավթի քերականական մեկնության նորահայտ ամբողջական ձեռագիր տեքստը» հոդվածի ֆրանսերեն թարգմանությունը (Բելգիայում)։ Զեկուցումներ է կարդացել Մոսկվայում (ՍՍՀՄ ԳԱ լեզվի և դրականության բաժանմունքի ընդհանուր ժողովում) և Երևանում, հրատարակության է հանձնել «Հայ բարբառագիտության ներածություն» մենագրությունը և մի քանի հոդված, խմբագրել է «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի» III հատորը և այլն։

Հաշվետու տարում ԳԱ թղթակից անդամ Է. Բ. Աղայանը հրատարակել է «Դրվագներ Արևելքի գրականության պատմության» մենագրությունը, ավարտել է «Ժամանակակից հայերենի բացատրական բառարանը» (մեկ հատորով), խմբագրել և հրատարակության է պատրաստել Հ. Աճառյանի «Արմատարանական բառարանի» I հատորը, խմբագրել է բազմահատոր բացատրական բառարանի II հատորը, մասնակցել է «Հայագիտությունը 50 տարում» գրքի կազմման աշխատանքներին, հրատարակել է մի քանի հոդված և այլն։

ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Մ. Ս. Հասրաթյանը 1970 թ. ընթացքում տպագրել է «Որտեղ է թաղված Մովսես Խորենացին», «Հայ ճարտարապետական գոհարները», «Մի քանի խոսք Սյունիքի մասին» հոդվածները, գրել է մեկ հոդված հայ ճարտարապետության մասին՝ Բեյրութում հրատարակվող «Հայկական հուշարձանները» մատենաշարի համար՝ որպես առաջաբան և այլն։

ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Մ. Ս. Շահինյանը ուսումնասիրել է «Ժամանակի բնության մասին Հեգելի մոտ» թեման, արտասահմանում կատարել է նաև գիտա-մասսայական մեծ աշխատանք։

ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Մ. Մ. Մկրյանը 1970 թ. հրատարակել է «Մ. Խորենացի» մենագրությունը (հայերեն և ռուսերեն), «Հայ գրականության» դասագիրքը (8-րդ դաս. համար)։ Ինչպես նաև «Հայ գրականության» դասագիրք արտասահմանի հայկական դպրոցների համար։

Լույս են տեսել տողերիս հեղինակի «Անդրկովկասի ժողովուրդների դարավոր բարեկամությունը», «Արշավիր Մելիքյան» մենագրությունները, «Սովետական Հայաստանը 50 տարում» կոլեկտիվ աշխատությունը (խմբագիր և հեղինակակից), բացի այդ հրատարակել ենք մի շարք հոդվածներ, ելույթներով մասնակցել հոբելյանական նստաշրջաններին, պատմական գիտությունների XIII միջազգային կոնգրեսին։ Խմբագրել «Լրաբեր» ամսագիրը և այլն։

Հաշվետու տարում որոշ աշխատանք է տարել հասարակական գիտությունների բաժանմունքի բյուրոն։ Ունեցել է 16 նիստ, որոնցում քննարկվել են ինստիտուտների գիտա-հետազոտական պլանների հաստատումը, ասպիրանտների ընդունելության հարցերը, «Հայ ժողովրդի պատմության» հատորների հրատարակման հետ կապված խնդիրներ, առանձին կարևոր աշխատությունների քննարկում և դրանց հրատարակման հարցերը, պրոբլեմային գիտական խորհուրդների և հանձնաժողովների կազմման և նրանց գործունեության հարցերը և այլն։

Բյուրոյի նիստերում քննարկվել են հատկապես «Կովկասի պատմա-ազգագրական ատլասի» կազմման աշխատանքները։ Բաժանմունքի բյուրոյին կից ստեղծվել է պրոբլեմային հանձնաժողով, որն ակտիվ գործունեություն է ծավալել։ Կազմվել է «ՍՍՀՄ-ում հայաբնակ վայրերի հոգևոր և նյութական մշակույթի հուշարձանները ուսումնասիրող և հրատարակող» հանձնաժողով, որի գիտական գործունեության պլանը նույնպես շուտով կքննարկվի։ Քննարկվել է նաև հայ հին դասական տեքստերի հայերեն թարգմանությունների քննական տեքստերի կազմման և հրատարակման հարցերը և այլն։

Հասարակական գիտությունների ասպարեզում գիտական ինֆորմացիայի գործն ակտիվացնելու նպատակով ՀՍՍՀ ԳԱ նախագահությանը կից ստեղծվել է գիտական ինֆորմացիայի սեկտոր, որին է հանձնվել ԳԱ ֆունդամենտալ գրադարանի ֆիլիալը հանդիսացող հասարակական գիտությունների գրադարանը։ Մնում է հուսալ, որ նորաստեղծ սեկտորը հաջողությամբ կկատարի իր վրա դրված պարտականությունը։ Բաժանմունքում արդեն քննարկվել են սեկտորի պլանները և գիտական աշխատանքի ուղղությունը։

Ընթացիկ տարում ակտիվ են եղել նաև միջազգային գիտական կապերը։ Ինչպես հայտնի է, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի և Հունգարիայի գիտությունների ակադեմիայի համագործակցության պլանի համաձայն, 1970 թ. աշխատանք է տարվել ուսումնասիրելու Հունգարիայում հրատարակված «Արմենիա» հանդեսը։ Գիտաշխատողների փոխայցելություններ են կատարվել Հունգարիայում և Հայաստանում հնագիտական պեղումներին մասնակցելու նպատակով։

1970 թ. շարունակվել է աշխատանքը «Հունգարիայի և Տրանսիլվանիայի հայերը XIX դ. I կեսին» թեմայի վրա։ ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի «Լրաբերում» և «Պատմա-բանասիրական հանդեսում» ո-

տեղվել են Հունգար գիտնականների հոդվածները Հունգարահայերի պատմության մասին։ Հունգարական ակադեմիայի հանդեսներից մեկում հրատարակվել է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի հիմնական գործունեությունն ամփոփող հոդվածը։

1970 թ. սեպտեմբերին, համագործակցության պլանի համաձայն Երևան այցելեց Հունգարիայի ԳԱ բնա-պատմական թանգարանի մարդաբանության ամբիոնի վարիչ Տիբոր-Տոտը, որը ծանոթացավ հնագիտական պեղավայրերի արդյունքներին, հանդիպեց հնագետ, ազգագրագետ, երկրաբան, մարդաբան, աշխարհագրագետ մասնագետների հետ, ուսումնասիրեց պետական պատմական թանգարանի նյութերը, մեր մասնագետներին ծանոթացրեց Հունգարիայում այդ ասպարեզներում կիրառվող նոր գիտա-հետազոտական մեթոդներին։

1970 թ. հունիսին Երևան ժամանեց նաև ՀԳԱ գրականագիտության ինստիտուտի գիտական աշխատակից Լայոշ Ֆերենցը, որը ծանոթացավ Հայաստանում գրական հոսանքների զարգացման պրոբլեմներին։

Մեր գիտնականներից շատերը մասնակցել են արտասահմանյան մի շարք կիտաժողովների։ Օրինակ՝ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի դիրեկտոր Ս. Ս. Թովմասյանը զեկուցումով հանդես է եկել Սմոլենիցում կազմակերպված Սովետա-Չեխական սիմպոզիումում։ Յա. Ի. Խաչիկյանը և Հ. Գ. Ասլանյանը Լլույթ էն ունեցել Բեռլինում՝ Հեգելի ծննդյան 200-ամյակին նվիրված կոնգրեսում, Է. Ս. Մարգարյանը՝ Վառնայի միջազգային սոցիոլոգիական կոնգրեսում, Ա. Մ. Եկմալյանը՝ Լեհաստանի ԳԱ հրավերով եղել է Լեհաստանի մի շարք քաղաքներում։ Մեր մի շարք գիտնականների գործեր թարգմանվում են արտասահմանյան լեզուներով։ Է. Ս. Մարգարյանի «Կուլտուրայի տեսության ակնարկներ» մենագրությունը թարգմանվում է հունգարերեն, Ս. Վ. Հովնանյանի հայ-բուլղարական հարաբերությունների մասին մենագրությունը՝ բուլղարերեն, Վ. Կ. Ոսկանյանի և Ջ. Գալստյանի «Հայերը ռուս-լեհական հարաբերություններում» լեհերեն։ Բավականին արդյունավետ է արվեստի ինստիտուտի գիտաշխատողների կապը Իտալիայի գիտնականների հետ։ Համատեղ ուժերով նրանք հրատարակել են հայկական հուշարձանների երեք պրակ։ Աշխույժ են նաև արևելագիտության սեկտորի, հնագիտության և ազգագրության ինստիտուտի կապերը մի շարք եվրոպական ու ասիական երկրների գիտնականների հետ և այլն։

Հաշվետու տարում խոշոր աշխատանք է ծավալել ԳԱ ֆունդամենտալ գրադարանը։ Այսօր այն ունի 1.952.803 գրադարանային միավոր, այդ թվում 643.005-ը օտար լեզուներով։ Գրադարանը կատարում է լայն գրքափոխանակություն։ Լույս է տեսել Ն. Մ. Քոչարյանի կենսամատենագիտությունը, շարունակվել է «Գիտությունը Հայաստանում 50 տարում» բազմահատոր կենսամատենագիտական աշխատության կազմումը և այլն։ Մեծ աշխատանք է տարվել հայոց լեզվի համաբարբառ քարտարանի ուղղությամբ։ Հրատարակվել է Մ. Խորենացու բառաքերականական համաբարբառը։ Մշակվել են Փ. Բյուզանդի, Ուխտանես եպիսկոպոսի և Հ. Իմաստասերի աշխատությունները, կազմվում են Ագաթանգեղոսի, Կ. Եղնիկի, Ղ. Փարպեցու, Կորյունի, Եղիշեի և մյուս մատենագիրների տեքստուալ և բառաքերականական համաբարբառները։

Չեռք բերված հաջողությունների կողքին, սակայն, անհրաժեշտ է նշել նաև այն թերությունները, որոնք տեղ են գտել մեր գիտա-հետազոտական աշխատանքներում, ինստիտուտների գործունեության մեջ։

Ամենից առաջ պետք է նշել բազմաթեմայնության մասին։ 1969 թ. 315 թեմայի փոխարեն ընթացիկ տարում ունենք 365 թեմա։ Եվ դա այն դեպքում, երբ գիտաշխատողների թիվը որոշ ինստիտուտներում նույնիսկ նվազել է։ Ինստիտուտների գործունեության մեջ նկատելի են նաև որոշ թեմաների ձգձգում, պլանների թերակատարում։

Տարեվերջի ստուգումները ցույց են տալիս, որ նույնիսկ ավարտված աշխատությունների մի մասը դեռ լիովին ավարտված չի կարելի համարել։ Դա հետևանք է այն բանի, որ բաժինները և դիրեկցիան ոչ բոլոր դեպքերում է, որ խորամուխ են լինում ամեն մի գիտաշխատողի գործունեության մեջ, ժամանակին ստուգում և համապատասխան օգնություն են կազմակերպում։

Ելնելով ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1968 թ. սեպտեմբերի 24-ի, ՀԿԿ Կենտկոմի ու ՀՍՍՀ Մինիստրների սովետի 1969 թ. մարտի 5-ի որոշումներից, մենք պետք է խորամուխ լինենք գիտական աշխատանքներում տեղ գտած թերությունների պատճառների մեջ և աշխատենք վերացնել դրանք։

Մի քանի խոսք հրատարակչական գործի մասին.

Մեր ինստիտուտների գործունեությունը հիմնականում ընթանում է նորմալ և, կարելի է ասել, ինտենսիվ։ Մեր գիտության արդյունքների ներդրումը ժողտնտեսության և կուլտուրայի մեջ մեր գրքերի հրատարակությունն է։ Իսկ եթե դրանց միայն 20%-ն է հրատարակվում, այդ նշանակում է, որ հասարակական գիտությունների ստեղծագործական արդյունքը չի հասնում ժողովրդին հարկավոր չափով։ Դրա հետևանքով այն աշխատությունները, որոնք տարիներով մնում են չտպագրված, անպայման հնանում են, ուստի և մեր գիտնականների ջանքերը իրենց նպատակին չեն հասնում։ Անհրաժեշտ է հասարակական գիտությունների համար ստեղծել հրատարակչական լայն բազա և ժամանակին լույս ընծայել պատրաստված աշխատությունները։ Այդ դեպքում մեր բաժանմունքի ազդեցությունը մեր կուլտուրայի զարգացման վրա և՛ չափազանց մեծ կլինի, և՛ կնպաստի Սովետական Հայաստանի կուլտուրական, գիտական զարգացմանը։

Առ այսօր չունենք հարմարավետ տպարան, եղածներն էլ լրիվ ծանրաբեռնվածությամբ չեն աշխատում։ Պետք է խիստ հսկողություն սահմանել հրատարակության վրա և կարգավորել այդ գործը։

Մեծ է այսօր հասարակական գիտությունների դերը։ Դրանք կոչված են վեր հանելու մեր ժողովրդի դարավոր մշակույթի հարուստ գանձերը, բացահայտելու նրա պատմական զարգացման օրինաչափությունները, խթանելու ժողովրդի զարգացման պրոցեսը սոցիալիզմից կոմունիզմին անցնելու ճանապարհին։ Հասարակական գիտությունները, միաժամանակ, հետևողական պայքար պետք է ծավալեն բուրժուական գաղափարական հոսանքների, հակալենինյան, հակակոմունիստական գաղափարախոսության ջատագովների մտացածին դրույթների դեմ։

Մեր աշխատություններում հատկապես կարևոր տեղ պետք է տրվի ժողովուրդների բարեկամության պրոբլեմին, որի դերը մեր ժողովրդի պատմության մեջ հսկայական է։ Հայ ժողովուրդը իր ամբողջ էությամբ նվիրված է ինտերնացիոնալիզմին և մենք պարտավոր ենք հարազատ մնալ այդ մեծ գաղափարին։

Սովետական Հայաստանի 50-ամյա հոբելյանը, որ այնքան բարձր մակարդակով տոնեց Հայաստանի կոմունիստական կուսակցությունն ու կառավարությունը, ժողովուրդների բարեկամության փայլուն ապացույցն էր։ Բոլոր հանրապետությունների պատվիրակությունների և մեր կուսակցության Կենտկոմի գլխավոր քարտուղար Լեոնիդ Իլյիչ Բրեժնևի այցելությունը Հայաստան առանձնահատուկ շուք տվեցին հայ ժողովրդի ազգային տոնին։

Դեռևս ոչ մի պետական գործիչ այնպիսի սրտառուչ ու հշմարտացի գնահատական չի տվել մեր ժողովրդին, ինչպիսին տվեց Լեոնիդ Իլյիչ Բրեժնևը, այդ օրերին։ Նա ասաց. «Կկամենայի կանգ առնել Սովետական Հայաստանի ժողովրդին հատուկ մի քանի բնորոշ գծերի վրա։ Նախ և առաջ գա բարձր կուլտուրան, կենցաղում, մարդկանց հետ շփվելիս ունեցած կուլտուրան է, աշխատանքային կուլտուրան, գիտական մտքի բարձր թռիչքը և արվեստի վառ ինքնատիպությունը։ Մենք դրանում համոզվեցինք ամենուրեք՝ մասսայական ժողովներում, արդյունաբերական ձեռնարկություններում, գիտական հիմնարկներում ու թանգարաններում, հոբելյանական հոյակապ համերգում։ Ամենուրեք երևում է բարձր կուլտուրայի տեր, կիրթ հասարակության կյանքը։ Սա մեր կուսակցության մեծ հաղթանակն է, սոցիալիստական կարգերի հաղթանակը։

Սովետական Հայաստանի ժողովրդի երկրորդ բնորոշ առանձնահատկությունն այն է, որ նա իր հայրենի երկրի՝ Սովետական Սոցիալիստական Հայաստանի նկատմամբ ջերմագին խանդաղատանքով տոգորված հայրենասեր ժողովուրդ է։ Հայրենասիրությունը մի այնպիսի սքանչելի հատկություն է, որն ամենախորին հարգանք է ներշնչում։

Բայց եթե հայերը և մեր երկրի մյուս ժողովուրդները ընկալեին գործի միայն մեկ կողմը, եթե նրանք խոսեին ու մտածեին միայն իրենց հանրապետության մասին, նրա քաղաքների ու դաշտերի, նրա մշակույթի մասին, ապա կարող էր ազգայնական դիրքերը գլորվելու վտանգ առաջանալ։ Հայաստանում մենք տեսանք միանգամայն այլ բան։ Իրենց հանրապետության նկատմամբ հայրենասիրական բարձր ոգին հայերի, ինչպես որ սովետական մյուս բոլոր ժողովուրդների մեջ դրսևորվում է առավել լայն առումով հայրենասիրական սկզբունքի՝ նվիրվածությամբ ու սիրով դեպի մեր ընդհանուր մեծ սոցիալիստական հայրենիքը՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը։

Վերջապես, երրորդ առանձնահատկությունն այն է, որ Սովետական Հայաստանի ժողովուրդը՝ կոմունիստներն ու անկուսակցականները, բանվորությունը, գյուղացիությունն ու մտավորականությունը հայրենասիրության սկզբունքորեն զուգորդում են սովետական մարդու մի այլ, ոչ պակաս արժեքավոր, հատկության՝ ինտերնացիոնալիզմի հետ։

Լինել հայրենասեր և միևնույն ժամանակ տոկուն, համոզված ինտերնացիոնալիստ՝ նշանակում է խորապես ըմբռնել սոցիալիստական աշխարհայացքը, սոցիալիստական մշակույթը, նշանակում է հավատարիմ լինել լենինյան մեծ ուսմունքին»[1]։

Սպառիչ ու համապարփակ Լ. Լ. Ի. Բրեժնևի գնահատականը նշանավոր աստրոֆիզիկոս, մեր ակադեմիայի պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանի

Լ. Ի. Բրեժնև. «Սովետական Հայաստանի 50 տարին», Երևան, 1970, էջ 62—65։

մասին. «Եթե որոշ տերմիններ փոխ առնենք նրա սիրած աստղագիտությունից,— ասաց ընկ. Լ. Ի. Բրեժնևը,— ապա կարելի է համարձակորեն ասել, որ սովետական ու համաշխարհային գիտության երկնակամարում ակադեմիկոս Համբարձումյանի անունը շողում է որպես առաջին մեծության աստղ»[2]։

Այս բոլորը մեկ պարտավորեցնում է է՛լ ավելի լավ աշխատել հանուն մեր ժողովրդի նոր առաջընթացի, հանուն հասարակական գիտությունների մակարդակի բարձրացման և պատվով կատարելու այն պահանջները, որ մեր առջև դնում են մեր կուսակցությունն ու կառավարությունը։

2 Նույն տեղում, էջ 23։